**Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**
**Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման ծրագրի վերաբերյալ**

**Վարկային համաձայնագրի անվանումը՝** Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրահաղորդման ցանցի վերակառուցման ծրագիր (ADB Loan-3150 ARM)
**Համաձայնագրի ստորագրման ամսաթիվը՝** 05.09.2014թ.
**Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 05.12.2014թ.
**Համաձայնագրով նախատեսված գումարը՝** 14,554,000.0 ԱՄՆ դոլար
**Համաձայնագրով նախատեսված տոկոսադրույքի չափը՝** 3.14 %
**Համաձայնագրի փակման ամսաթիվը՝** 30.06.2022թ.
**Համաձայնագրով նախատեսված վարկի մարման սկիզբը և ավարտը՝** 05.11.2019թ.-15.05.2039թ.

**Ըստ համաձայնագրի տրամադրված վարկային ծրագրի անվանումը՝** Կարգավարման կառավարման ավտոմատացված համակարգի (SCADA) ընդլայնման ծրագիր

**Ծրագրի նպատակը՝** Համակարգում արդեն իսկ ներդրված SCADA համակարգը լիարժեք գործող ու արդյունավետ դառնալու համար անհրաժեշտ է ընդլայնել և արդիականացնել այն: Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցման շրջանակներում նախատեսվում է լրացուցիչ տեղադրել շուրջ 280 կմ օպտիկամանրաթելքային մալուխ, զգալիորեն ավելացնել SCADA համակարգից օգտվողների քանակը, արդիականացնել գոյություն ունեցող ծրագրային փաթեթը և ստեղծել հարևան երկրների SCADA համակարգերի հետ տվյալների միջսերվերային փոխանակման հնարավորություն, ինչպես նաև ծրագրի շրջանակներում նախատեսվում է կառուցել էլեկտրաէներգետիկ համակարգի պահուստային կառավարման կենտրոն, որը կարևոր է հատկապես այն պարագայում, երբ առաջնային կարգավարական կենտրոնը (որը տեղակայված է Երևանի կենտրոնում) բնական աղետների, պատերազմական իրավիճակների կամ տեխնիկական պատճառներով խափանվում է և անհրաժեշտ է ապահովել էլեկտրաէներգետիկական համակարգի վերահսկողությունն ու շարունակական կառավարումը:

**Ակնկալվող արդյունքները՝** Բարձրացնել ստացվող տվյալների ճշգրտությունը, էներգահամակարգի կարգավարման հուսալիությունը, ԷԷՀՕ-ի տեխնիկական, ֆինանսական և գործառնական կարողությունները, ինչը կնպաստի էներգահամակարգի հուսալի աշխատանքին, կորուստների նվազեցմանը, անխափան էլեկտրամատակարարմանը, վթարների հայտնաբերման ու սպառողների էներգամատակարարման ընդհատումների ժամկետների կրճատմանը:

**Ծրագրի խորհրդատուի անվանումը՝** Tractebel Engineering GmbH և CESI S.p.A համատեղ ձեռնարկություն և ենթախորհրդատու Ամերիա

**Խորհրդատուի պայմանագրի անվանումը՝** «Կարգավարական կառավարման ու տվյալների հավաքագրման (SCADA)/էներգիայի կառավարման (EMS) համակարգերի ընդլայնման և արդիականացման աշխատանքների վերահսկողություն և կառավարում» պայմանագիր

**Խորհրդատուի պայմանագրի գումարը՝** 1,300,366.0 ԱՄՆ դոլար
**Խորհրդատուի պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 06.05.2015թ.
**Խորհրդատուի պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 06.05.2015թ.
**Խորհրդատուի պայմանագրի սկիզբը և ավարտը՝** 06.05.2015թ. - 30.06.2022թ.

**Ծրագրի կապալառուի անվանումը՝** Ռեդինետ (Հայաստան) և Siemens (Ավստրիա) կոնսորցիում

**Կապալառուի պայմանագրի անվանումը՝** SCADA/EMS համակարգերի ընդլայնման ու արդիականացման և պահուստային կարգավարական կառավարման կենտրոնի կառուցման պայմանագիր

**Կապալառուի պայմանագրի գումարը՝** 9,926,226.0 եվրո և 207,377,090.0 ՀՀ դրամ
**Կապալառուի պայմանագրի ստորագրման ամսաթիվը՝** 23.10.2017թ.
**Կապալառուի պայմանագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը՝** 01.12.2017թ.
**Կապալառուի պայմանագրի սկիզբը և ավարտը՝** 23.10.2017թ.-30.04.2022թ.

**Ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները 31.03.2021թ. դրությամբ՝**
**Խորհրդատու՝** 1,122,607.92 ԱՄՆ դոլար (Վարկային միջոցներից) և 270,759.43 ԱՄՆ դոլար (Համաֆինանսավորման միջոցներից)
**Կապալառու՝** 10,636,532.9 ԱՄՆ դոլար (Վարկային միջոցներից) և 1,199,787.0 ԱՄՆ դոլար (Համաֆինանսավորման միջոցներից), տոկոսների վճարում 634,472.24 ԱՄՆ դոլար (Վարկային միջոցներից)

**Ծրագրի շրջանակներում կատարված վճարումները 31.03.2021թ. դրությամբ՝**
**Խորհրդատու՝** 1,122,607.93 ԱՄՆ դոլար (Վարկային միջոցներից) և 270,889.36 ԱՄՆ դոլար (Համաֆինանսավորման միջոցներից)
**Կապալառու՝** 10,027,903.1 ԱՄՆ դոլար (Վարկային միջոցներից) և 1,177,197.89 ԱՄՆ դոլար (Համաֆինանսավորման միջոցներից), տոկոսների վճարում 634,472.24 ԱՄՆ դոլար(Վարկային միջոցներից)

**Ծրագրի ընթացիկ իրավիճակը՝**

Ծրագիրն իրականացման փուլում է: Սարքավորումների՝ աշխատանքին պատրաստ լինելու փորձարկման մեկնարկի ամսաթիվը՝ 10 մարտի 2020թ., ավարտը՝ 9 հուլիսի 2020թ., տևողությունը 90 օրացուցային օր:

SCADA համակարգի փորձարկման աշխատանքների ժամկետի ավարտին ի հայտ եկած համակարգային որոշակի թերությունների առկայությունը, միաժամանակ Կորոնավիրուսով պայմանավորված արտակարգ դրության հետևանքով SIEMENS ընկերության մասնագետների Երևան ժամանելու անհնարինությունը չեն թույլատրել փորձարկումներն ավարտված համարել դրական վերջաբանով:

Փորձարկումների ընթացքում հեռավար եղանակով իրականացվել են աշխատանքային քննարկումներ ԷԷՀՕ մասնագետների, Կապալառուի և Խորհրդատուի ներկայացուցիչների միջև:

ՀՀ կառավարության 2019թ. սեպտեմբերի 19-ի՝ «Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» վարկային ծրագրի շրջանակներում տնտեսված միջոցների օգտագործման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» № 1258-Ա որոշման համաձայն՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող «Էլեկտրաէներգիայի հաղորդման ցանցի վերակառուցում» վարկային ծրագրի շրջանակներում տնտեսված միջոցներից 954,000.0 ԱՄՆ դոլար գումարը նպատակաուղղվել է էներգահամակարգի հուսալի և անխափան աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ տեխնոլոգիական տվյալների հաղորդման լրացուցիչ կրկնորդված կապուղիների անցկացման աշխատանքներին:

Ներկրվել են անհրաժեշտ քանակի օպտիկամանրաթելային մալուխներ, կատարվել են դրանց անցկացման նախագծային աշխատանքները:

Համաձայն վարկային համաձայնագրում կատարված ենթավարկի փակման ամսաթվի (30.06.2022թ.)՝ կատարվել են համապատասխան փոփոխություններ Խորհրդատուի և Կապալառուի հետ կնքված Պայմանագրերում: Խորհրդատուի հետ 07.12.2020թ. կնքվել է թիվ 7 Լրացուցիչ համաձայնագիրը՝ 100,452.0 ԱՄՆ դոլար գումարով, իսկ Կապալառուի հետ 26.10.2020թ. կնքվել է թիվ 6 Լրացուցիչ համաձայնագիրը՝ 621,513.0 Եվրո գումարով:

Ծրագիրն իրականացվում է «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ կողմից: